ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ
12 մարտի 2020 թվականի

Հիմք ընդունելով «Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի ճարտարապետների պալատի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի ճարտարապետների պալատի դաշնակից անդամների ընտրության չափորոշիչները և ընդունելության կարգը:

Հայաստանի ճարտարապետների պալատի դաշնակից անդամների ընտրության չափորոշիչները և ընդունելության կարգը

Հայաստանի ճարտարապետների պալատի դաշնակից անդամ պալատի Խորհրդի որոշմամբ կարող են լինել ճարտարապետության ասպարեզում առանձնահատուկ վաստակ ունեցող մասնագետները, որոնք ունեն ճարտարապետության մագիստրոսի աստիճան և նվազագույնը երկու տարվա աշխատանքային փորձառություն, կամ բակալավրի աստիճան և հինգ տարվա աշխատանքային փորձառություն և համապատասխանում են ներքոնշյալ չափորոշիչներից առնվազն մեկին.
վերջին հինգ տարիների ընթացքում՝

- միջազգային մասնագիտացված մրցույթներում կամ հավաքներում ներկայացրել են Հայաստանը,
- գործուն մասնակցություն են ունեցել մասնագիտական հանրային հարթակների ձեւավորման և հանրայնացման նախաձեռնություններում,
- մասնակցել են Հայաստանի ճարտարապետների պալատի (այդ թվում՝ Հայաստանի ճարտարապետների միավորման) աշխատանքներում՝ նպաստելով ոլորտի զարգացմանը,
- շարունակաբար դասավանդել են մասնագիտական առարկաներ,
- մասնակցել են հանրային հնչեղություն ստացած և մասնագիտական շրջանակների ուշադրությանն արժանացած նախագծերի մշակմանը:

Դիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել.

- դիպլոմի պատճենը,
- երկու երաշխավորագիր 15 տարուց ավելի աշխատանքային փորձ ունեցող և պալատի անդամ հանդիսացող անձանցից
- կատարած աշխատանքների ալբոմ (պորտֆոլիո)
- աշխատանքային փորձառությունը հավաստող փաստաթուղթ:

Դիմումն ստանալուց հետո, մեկամսյա ժամկետում պալատի խորհրդի կազմից ընտրված ժամանակավոր աշխատանքային խմբի կողմից պատրաստված առաջարկությունը պալատի նախագահը ներկայացնում է խորհրդի քննարկմանը:

Պալատի նախագահ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ